ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Երևան-10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

«02» 05 2013թ. N 54-Ա

# ՀՐԱՄԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՑ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ, ԱՄՓՈՓՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով և հիմք ընդունելով <<Պետական վիճակագրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածն ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի փետրվարի 2-ի թիվ 135-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության համայնքների տեղեկատվական բազայի արդիականացման նպատակով Հայաստանի Հանրապետության համայնքներից և Հայաստանի Հանրապետության մարզպետներից վիճակագրական տվյալների հավաքագրման, ամփոփման և համայնքների տեղեկատվական բազա էլեկտրոնային ծրագիր մուտքագրման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել <Քաղաքային և գյուղական համայնքների տվյալների հավաքագրման հարցաթերթերն ու լրացման վերաբերյալ մեթոդական ուղեցույցը>՝ համաձայն հավելված 2-ի:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի ղեկավար Կ. Իսախանյանին՝ սահմանել հսկողություն սույն կարգով նախատեսված գործառույթների իրականացման նկատմամբ:

4. Սույն կարգը գործում է 2013 թվականի հունիսի 1-ից:

պաշտոնակատար
Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ,
տարածքային կառավարման նախարարի
2013 թվականի ________ <<2>>-ի
թիվ --54-Ա հրամանի

ԿԱՐԳ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՑ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ, ԱՄՓՈՓՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունում Հայաստանի Հանրապետության համայնքների տեղեկատվական բազայի վարման և բազայի արդիականացման նպատակով Հայաստանի Հանրապետության մարզպետներից և համայնքներից անհրաժեշտ տվյալների հավաքագրման, ամփոփման և համայնքների տեղեկատվական բազա էլեկտրոնային ծրագիր մուտքագրման ընթացակարգն ու պայմանները:

## II. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱՆ

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունը իրականացնում է ճյուղային (գերատեսչական) հաշվառում համայնքների տեղեկատվական բազայի վարման միջոցով: Համայնքների տեղեկատվական բազան Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության կողմից վարվող տվյալների բազա (շտեմարան) է և հանդիսանում է գերատեսչական և տեղական (համայնքային) հաշվառման արդյունք:

3. Համայնքների տեղեկատվական բազայի վարման համար անհրաժեշտ վարչական բնույթի դիտարկումներն իրականացվում են համապատասխան հարցաթերթերի, տեղեկանքների և այլ տվյալների հավաքագրման փաստաթղթերի միջոցով: Տեղեկատվական բազա վարելու նպատակով ներդրվող փաստաթղթի համար կիրառվում է դիտարկման փաստաթղթի օրինակելի դիմային ձևը, որի վերնամասում պարտադիր նշվում են տվյալների հավաքագրում և հաշվառում իրականացնող մարմնի՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության անվանումը, <<հարցաթերթ>> (հաշվետվություն, տեղեկանք և այլն) բառերը և դրանք հաստատվում են նախարարի հրամանով:

4. Համայնքների տեղեկատվական բազան համայնքների նկարագրի վերաբերյալ տվյալների ամբողջությունն է և կարող է օգտագործվել համայնքների սոցիալ-

տնտեսական վիճակի դինամիկ վերլուծության, քաղաքականությունների մշակման և համայնքների աջակցությանը միտված ծրագրերի արդյունավետ իրականացման համար: Համայնքների տեղեկատվական բազայի կառավարումն ու տեղեկատվության հրապարակումն ապահովվում է էլեկտրոնային ծրագրի միջոցով, որի սպասարկումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի կողմից:

5. Համայնքների տեղեկատվական բազայի տվյալները ենթակա են արդիականացման եռամսյակային և տարեկան պարբերականությամբ:

## III. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐԸ

6. Հայաստանի Հանրապետության համայնքների տեղեկատվական բազայի արդիականացման համար անհրաժեշտ տվյալների հիմնական աղբյուրը Հայաստանի Հանրապետության համայնքների տվյալների բազաներն են:

7. Համայնքների տեղեկատվական բազայի արդիականացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության բոլոր համայնքներից:

## IV. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱՆԵՐԸ

8. Հայաստանի Հանրապետության համայնքներում համայնքային տեղեկատվական բազաները վարվում են Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Համայնքային տեղեկատվական բազայի վարումն իրականացվում է Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից <<Համայնքներում տնտեսությունների հաշվառման գրքերի>> վարման միջոցով, ինչպես նաև այլ դիտարկումների հիման վրա: <<Համայնքներում տնտեսությունների հաշվառման գրքերի>> վարումը բնակչության թվաքանակի, սեռատարիքային և սոցիալական կազմի, համայքներում տեղաբաշխված մշակութային, կրթական և մարզական համալիրների (կառույցների), առողջապահության, բնակարանային կոմունալ տնտեսության, արտադրական ենթակառուցվածքների, համայնքների բյուջեների և այլ անհրաժեշտ տեղեկությունների վերաբերյալ մշտապես կուտակվող և պահպանվող ցուցանիշների համակարգ է:

## V. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

9. Համայնքների տեղեկատվական բազայի վարման պահանջներն են.

ա/ Հայաստանի Հանրապետության համայնքների և մարզերի աղքատության գնահատման, սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և բնապահպանական վիճակի նկարագրման, վերլուծությունների և քաղաքականությունների մշակման համար պահանջվող տեղեկատվության ապահովում,

բ/ պետական վիճակագրության և այլ տեղեկատվական ռեսուրսների տվյալների հետ համադրելիության ապահովում:

## VI. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱՆԵՐԻՑ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄԸ

10. Հայաստանի Հանրապետության համայնքներից Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության <<Համայնքների տեղեկատվական բազայի>> արդիականացման նպատակով անհրաժեշտ տվյալները, կախված փաստաթղթի տեսակից՝ հավաքագրվում, ամփոփվում և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն են ներկայացվում Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ համաձայն համապատասխանաբար <Քաղաքային և գյուղական համայնքների տվյալների հավաքագրման հարցաթերթերի>, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ այլ փաստաթղթերի:

11. Հայաստանի Հանրապետության մարզպետների համար տեղեկատվության հավաքագրման աղբյուր են հանդիսանում Հայաստանի Հանրապետության համայնքները, մարզպետարանների աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումները, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմինների, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների և Հայաստանի Հանրապետության օրենքով ստեղծված մարմինների տարածքային ստորաբաժանումները:

12. Մարզպետները անհրաժեշտ տեղեկատվությունը համայնքների ղեկավարներից ստանում են եռամսյակի համար մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, իսկ տարեկան ցուցանիշները՝ մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա հունվարի 15-ը:

13. Մարզպետները գյուղական և քաղաքային համայնքների ղեկավարներից տեղեկատվությունը հավաքագրում են համաձայն համապատասխանաբար <Քաղաքային և գյուղական համայնքների տվյալների հավաքագրման հարցաթերթերի> կամ այլ փաստաթղթերի՝ էլեկտրոնային և թղթային կրիչներով:

14. Հայաստանի Հանրապետության մարզպետները մարզպետարանի աշխատակազմի միջոցով կազմակերպում են հավաքագրված տվյալների ամբողջականության, օբյեկտիվության և արժանահավատության ստուգումը՝ հիմք ընդունելով հարցաթերթերի (այլ փաստաթղթերի) լրացման մեթոդական ուղեցույցով՝ ներկայացված սահմանումները, պարզաբանումներն ու մեկնաբանությունները՝ միաժամանակ, անհրաժեշտության դեպքում, համադրելով դրանք Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տարածքային ստորաբաժանումների տնօրինած տեղեկատվության հետ:

15. Մարզպետները մարզպետարանի աշխատակազմի միջոցով ստացված տեղեկատվությունը ամբողջականացնում են և եռամսյակի համար՝ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը, իսկ տարեկան ցուցանիշները՝ մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա հունվարի 25-ը, Microsoft Excel ձևաչափով ներկայացնում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն:

## VII. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐՈՂՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՈՒՄԸ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

16. Տվյալների հավաքագրման գործընթացում (դիտարկումներում) ընդգրկվելու և սահմանված ժամկետներում ու պահանջվող ձևաչափով տեղեկություններ տրամադրելու

մասին Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները նախապես գրավոր իրազեկվում են Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետների կողմից հաշվետու ժամանակաշրջանից առնվազն մեկ ամիս առաջ:

## VIII. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ

17. Մարզպետների ներկայացրած տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության աշխատակազմը ամփոփում է և հրապարակում: